

niens, I. էջ 568, հմմտ. էջ 562): Նմանապատիվներ տես նաև Միսուան, 112. հմմտ. 87, ծ. 1. և Հայաստան, Բ., 425: Ձեռագրերն մասին խոսած է Macler, Catalogue, p. 12—14: Յիշատակարանը՝ Յովսէփեան, Յիշատակարանք, էջ 609: Չարբ., Պատմ. հայկ. հին Դպրութեան, 92:

Հ. Ն. ԱՎԻՆԵԱՆ

ԽՈՉՈՒՄ ԵՎ ԵՐԿՐԱԿՆԵՐԻ ՈՂՐ ՆԵՐՍԷՍ ԼՈՄԲՐՈՆԵՆՑԻՈՅ

Ս. Ներսէս Լամբրոնացի ունեցած է խաչատուր անունով աշակերտ մը, որուն կենսագրութենէն շատ քիչ բան ծանօթ է: 1192ին գրուած Յիշատակարանէ մը¹ կ'իմանանք թէ Գէորգ Սկեւոացոյն հետ «համակրօն», այսինքն՝ Սկեւոայ Վանքի վանական է, ուր Ս. Ներսէս Լամբրոնացոյ Առաջնորդութեան տակ «ճշնագրեաց» և անոր «մաքուր անձինն սրբութեամբ պաշտօնեաց», «աշակերտեալ բանից և նմանութեամբ ընթացից» իր վարդապետին՝ Ներսիսի: «Հաւասար տեսն իւրոյ և վարժապետի» սիրող եղած է գրոց և ընթերցմանց, մանաւանդ Ս. Հայրերու վարուց, որով «ի նորին (Ս. Ներսիսի) յորդորմանէ և խրատու» Սաչատուր՝ իր «համակրօն եղոր» Գէորգ Սկեւոացոյն 1192ին գրել կու տայ «Վարք Հարանց» մը: Այս մասին վերոյիշեալ Յիշատակարանը կը գրէ. «Յամի թուակ. Հայոց ՈՍԱ. (=1192) և է հայրապետութեան Գրիգորի՝ մակակոչեցելոյ Տղայ, և է թագաւորութեան Յունաց Իսահակայ... գրեցաւ վարք Սրբոց Հարցն և խաւք ազատեալք և բանք վարդապետութեան լրացէս, որ դատաւ այժմ է զանազան աւրինակս՝ է մի հաւաքեալ, ի վանքս Սկեւոայ... հրամանաւ նգնագրեաց եղբար մերոյ խաչատուր, քանզի այս աստուածային այրս ստիպեաց զիմ տկարութիւնս՝ համալիրան եղբարս իւր Գեորգեայ՝ ընուլ զփափաք տենչանաց իւրոյ այսու մատենիս. և ևս... յանձն առի աւելի քան զկար իմ, և շնորհին Աստուծոյ կատարեցի, ընդ ձեռամբ հոգեւոր վերականգնութեան տեսն իմոյ Ներ-

¹ Տե՛ս Գրիգորի կաթ. Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., ԱՅԹԻԿԱՍ 1951, էջ 559—562:

սիսի արքեպիսկոպոսի սրբոյ, որ այժմ կայ ի գուլիս սուրբ և հռչակաւոր այս ուխտի միաբանութեան ժողովոց... որոյ եղբայրս այս խաչատուր կամակատար սպասաւոր և մաքուր անձինն սրբութեամբ պաշտաւնեաց, աշակերտեալ բանից և նմանութեամբ ընթացից և բաղձանաց ի նոյն նկրտել, որոյ և սա ըստ չափու իւրոյ ստացաւ մատեանս գրոց հաւասար տեսն իւրոյ և վարժապետի և գոյն ի նորին յորդորմանէ և խրատու յաւժարութեամբ ետ գրել, քանզի միշտ լսէր ի վարդապետախաւս բանից նորին²:

Սաչատուրի ինչպէս ծնունդը, նոյնպէս և մահուան պարագաները անծանօթ են:

Սաչատուր՝ Ներսէս Լամբրոնացիի մահուան առթիւ (1198 Յուլ. 14) Ողբ մը գրած է, որուն մէջ գրած է իր ամբողջ հոգին, ողբալով վաղամեռիկ իր սիրելի վարդապետը՝ խանդաղատալից բառերով: Այդ «Ողբ»ը 103 տողով չափական ոտանաւոր մըն է, իւրաքանչիւր տողը 9 վանկով և հատածեալ՝ 4 + 5 = 9: «Ողբ»ին գրութեան տարին Յովսէփեան³ կը համարի 1198: Նոյնպէս Ալիշան կը գրէ. «Անշուշտ ի նոյն իսկ աւուրս սգոյն ոգեաց Սաչատուր... զՈղբս⁴»:

Ողբիս լեզուն ուսուցիչական է, այսինքն՝ միջնադարեան աշխարհարար, զոր Աճառեան⁵ «չքնաղ նմոյշ միջնադարեան հայ գրականութեան» կը համարի: Գրութեան մէջ աչքի զարնող երկու օտար բառեր գործածուած են. շիքիբոն և քուպիտի, որոնց մեկնութիւնը տուած է Աճառեան, առաջինը մեկնելով նստարան, իսկ երկրորդին համար գրելով. «Կոպիտ բառին քաքարական ձեւն է⁶»:

Միջնադարեան հայերէնի մէջ գործածուած ցանցառ բառ մըն է նաև Ողբիս առաջին բառը — Ա՛մ — որ բացազանչութիւն մըն է ինքնուրոյն գեղեցկութեամբ, զարմանք և ցու միանգամայն յայտնող: Միայն Սարգիսեանի քով⁷ սխալ մեկնութիւն տրուած է բառին՝ «ամենայն»ի համառօտութիւնը կարծուելով:

Գրութեանս ոճի և արտայայտութեան

² Յովսէփեան, անդ: Տե՛ս նաև Ալիշան, Միսուան, էջ 98:
³ Յիշատակարանք, անդ, էջ 634:
⁴ Միսուան, էջ 94:
⁵ Հայոց Անձնանունների Բառարան, Բ., Երեւան 1944, էջ 469:
⁶ Անդ, էջ 472:
⁷ Բարսեղ Սարգիսեան, Ցուցակ, Բ., էջ 1215:

ՈՂԲ

Ի ՅԱՐԷՆՊԻՍԿՈՊՈՍՆ ՏԱՐՍՈՆԻ Ի ՄԵՆՆԵ ՆԵՐՍԷՍ ասացեալ խաչատուր պաշտօնէի նորին աշակերտի:

Ա՛մ, զահ թողում, զամաւթ մոռանամ,
 Ձիմ լուսեղէն Տէրն մեծարեմ,
 Ձիւր սնընդեան պարտքն վճարեմ,
 Ածեմ զուշովս ու դառնամ ի միտ:
 Երբ զիմ ճարակ Տէրն յիշեցի,
 Լոյսըս զնաց, ուժս պակասեաց,
 Խելքս ու հոգիս իմ գոմարեցաւ:
 Յիշեմ զիմ Տէրն ի շիքիբոնին,
 Յիշեմ զիմ Տէրն ի նարեկացին,
 Յիշեմ զիմ Տէրն յառջև կանթեղին,
 Յիշեմ զիմ Տէրն ի յեկեղեցին,
 Յիշեմ զիմ Տէրն ի տան ի զգեստին,
 Յիշեմ զիմ Տէրն ի բաղմախաչին,
 Յիշեմ զիմ Տէրն յառջև խորանին
 Յիշեմ զիմ Տէրն ի պատարաղին:
 Առ ձեզ խաւովմ, հին կտակարանք,
 Եկա՛յք որ լանք զի անտիրացաք,
 Ե՛կ Սողոմոն, զի անպիտացար,
 Ե՛կ Դանիէլ, որ խոպանացար,
 Ե՛կ Աբարաժք, լա՛ց որ փակեցար,
 Ար՛ ե՛կ Դաւիթ, որ անզարդեցար:
 Առնում լալով վայիս ձայնակից
 ՉՅովհաննէս զՈղբին Որոտման.
 Ե՛կ ժողովէ զՏեսիլն ու պահէ,
 Ձի այլ չկայ Տէրն որ մեկնէ.
 Բայց լա՛ց ու վա՛յ տուր իրձ գերեւոյս,
 Ձի քո նման Տէր եմ կորուսել.
 Դառն տեսար դու զՏէրն ի խաչին.
 Դառն տեսայ զիմ Տէրն ի տախտին.
 Դառն լուար դու զձարաւին.
 Դառն լուայ ևս դարն աղմկին:
 Ասցողք թղթոց կաթողիկէից,
 Եկէ՛ք ու լի՛ք վայիս ձայնակից.
 Չունինք այլ Տէր որ հասկացնէ,
 Ոչ այլ զբաւղ, որ նոր նորոզէ:
 Ե՛կ առաքեալդ Տարսոնացի,

կերպի մասին կը գրէ Ալիշան. «... կարի խորագրած և սրտաշարժ, մանաւանդ սկզբնաւոր բացագանչութեամբն և վերջաբան տողին, որ և միակ և անմամակ բանակիւսուրբուն է յայնմ տեսակի՝ ի դպրութեան մերում⁸»:

Սաչատուրի այս Ձեռագրէն երեք ընդօրինակութիւններ ծանօթ են. էջմիածնի (Թ. 2496, 290բ—292բ), Վենետիկի (Թ. 309, Թղ. 2ա—3ա) և Վիեննայի (Թ. 219, Թղ. 257բ—258բ) օրինակներ: Առաջինը գրուած է 1293ին, Վենետիկինը 1871ին օրինակուած է Հ. Չարբարիս Գուրգէնեանէ՝ Էնֆիէճեանցի Ձեռագրէն, որ 1294 թուականին գրուած է⁹: Իսկ Վիեննայինը՝ ըստ Տաշեանի¹⁰ 1591ին գրուած է, մինչ Ակինեան¹¹ կը ստուգէ որ ան գրուած է 1290—1310ի շրջանին:

էջմիածնի օրինակը մեզ անմատչելի է: Վենետիկինը ունեցած է չորս տպագրութիւն. Բագմավէպ¹², Սիսուան¹³, Բագմավէպ¹⁴ և Հայապատում¹⁵: Բագմավէպին առնելով հրատարակած է նաև Անտոնեան¹⁶: Վիեննայի օրինակէն համառօտուած տպագրութիւն մը միայն եղած է Հ. Ղ. Յովնանեանէ¹⁷, որ նշումներ ըրած է Վենետիկի տպագրութիւններու վրայէն:

Մենք հոս ամբողջապէս կը ներկայացնենք Սաչատուրի «Ողբ»ը: Մեր հրատարակութիւնը հիմնուած է Վիեննայի Թ. 219 Ձեռագրին վրայ, որուն հետ մանրակրկիտ համաստած ենք տպագիր այն հինգ հրատարակութիւնները, որոնք կատարուած են Վենետիկի Թ. 309էն: Այս համեմատութեան մէջ նկատի չենք առնել Յովնանեանի հրատարակութիւնը, նախ՝ համառօտուած ըլլալուն, երկրորդ՝ սրբագրութիւն տեսած ըլլալուն համար:

Ուրեմն մեր համեմատութեան եղբներն են. Վիեննայի օրինակը (= A.), Բագմավէպ, 1874 (= B.), Սիսուան (= C.), Բագմավէպ, 1886 (= D.), Հայապատում (= E.) և Անտոնեան, Անտոնեաններ (= F.):

⁸ Միսուան, անդ:
⁹ Հմմտ. Սարգիսեան, Ցուց. Թ. 309:
¹⁰ Ցուցակ, էջ 559:
¹¹ ՀԱ. 1953, էջ 235:
¹² 1874, էջ 242—243:
¹³ 1885, էջ 94—95:
¹⁴ 1886, էջ 101—102:
¹⁵ 1901, էջ 433—435:
¹⁶ Հայոց Անձնանունների Բառարան, Բ., էջ 469—472:
¹⁷ ՀԱ. 1895, 308 և Միջնադարեան աղպարի տալիս շաղագրութիւն ուսուցիչական, Վիեննա 1911, էջ 10—12:

Խորագիր Վենետիկի օրինակն ունի. «Ողբ ի Տեր Ներսէս արքեպիսկոպոսի Տարսոնի, ասացեալ խաչատուր պաշտօնէի նորին աշակերտի». A. Ողբ — Ներսէս, չունի ասացեալ — աշակերտի:

3 B. Ձիւր: — 4 A. գոմարեմ. B. զուշովս: — 7 A. Խելք. B. Խելքս: — 10 B. առջև: — 12 B. ի տանն. C—F. ի տունն. A. ի պիտոսին: — 14 B. առջև: — 15—16 A. աւելագրութեամբ ունի «յիշեմ զիմ Տէրն»: — 17 B. Եկէք... անպիտացար: C—F անպիտացայ: — 18 B—E. Սողոմոն: — 19 B. խոպանեացար: — 21 A. զանզարդեցար. B—F. անպարեացար: — 29 B—F. Ես դառն: — 31 B. լուայց. — 32 B—F. — 29 B—F. Ես դառն: — 31 B. Ես ոչ. C—F. Ու ոչ: — Լացողք թղթոց: — 35 B. Ես ոչ. C—F. Ու ոչ: — 36 B—F. Ու ա՛ն ամփոփէ զբանքս որ լսեցի: —

Ա՛ն ամփոփէ զբանդ որ լսեցի .
 Ե՛կ Աթանաս լալոյս ճայնակից ,
 Բաներս քո են պատարագի ,
 40 Բայց իմ հսկող Տէ՛րն չերեւի ,
 Ոչ մեկնուի ՚ւ ոչ բացայայտի ,
 Ոչ այլ պայծառ քարոզն ասուի ,
 Ոչ այլ նման քեզ Տէ՛ր դտանի ,
 Ոչ այլ հսկող թեւքդ տարածի ,
 45 Ոչ այլ անբուն ակն բոլորի ,
 Ոչ այլ հեղեղ արտասունքն թափի ,
 Անտանելի հեծն այլ չլըսի ,
 Անբառ հառաչն այլ չերեւի :
 Չայնեմ վանիցն որ հովիւ չունի ,
 50 Կարաւա եղեւ արթուն հովուի .
 Աստուա՛ծ , ու զայս բանս գրեցի .
 Որ ո՛վ լինի , զերդ զինքն չլինի :
 Իմ Տէ՛րն արթուն էր յամէն տեղի ,
 Կիրթ էր ու վարժ ամէն իմաստի .
 55 Կենաւն սուրբ էր ոչ քուպիտի .
 Վարուքն անրիժ նման Մովսէսի .
 Սրտին ողորմ նման Պաւլոսի .
 Աղքատասէր նման Յիսուսի :
 Ներսէս պրակ էր յեկեղեցի .
 60 Չարթուցանէր զամէնն ի բարի .
 Ներսէս անաչառ ծուլիցն ի տեղի .
 Հեզ եւ հանդարտ արթնոցն ի բարի .
 Ներսէս արթուն էր դէմ գիշերի .
 Հանէր ի դլուխ զցայգն ի կարգի :
 65 Հեռ սահմանէր զկարգն ի տեղի .
 Հեռ խոկալով դէէր դրուի .
 Երբ առաւառ լինէր ցերեկի ,
 Սկիզբն զնէր նա պատարագի :
 Ներսէս ցատուճն էր ընդդէմ ախտից .
 70 Չար խորհրդոց չտայր նա տեղի .
 Բայց զըւարթուն ի պատարագի .
 Հեչա եւ կամակ եղբարցն ամէնի :
 Ներսէս աղբււր անցամաքիլի

Ունէր ի դլուխն իւր գովելի .
 Հեռ տոչորէր յաղագս ամէնի .
 Հեռ արտասուէր ի պատարագի :
 Ներսէս վստահ ի սէրն Յիսուսի ,
 Մեղաւորաց տայր զեկեղեցի .
 Յիշէր զբանըն մեծ տէրունի
 Թէ ես եկի վանց մեղաւորի :
 Ներսէս այրեաց լինէր ինամածու .
 Որրոցն հեչա տեղի խաւսելոյ .
 Ունեւորացն աւրինակ բարւոյ .
 Չունեւորացն էր տուն կենալոյ :
 Աւա՛ղ մտացն , որ դադարեցաւ .
 Աւա՛ղ գրչին , որ խոպանացաւ .
 Աւա՛ղ բանին , որ պակասեցաւ .
 Աւա՛ղ տեսոյն , որ թառամեցաւ .
 Աւա՛ղ բառին , որ նուազեցաւ .
 Աւա՛ղ գերեացս , որ որբ մնացաք :
 Դո՛ւ , Տէ՛ր , գտար , որում ցանկացար .
 Դո՛ւ , Տէ՛ր , հասար , ում կարօտացար .
 Դո՛ւ , Տէ՛ր , առեր , զոր վաստակեցեր .
 Դո՛ւ , Տէ՛ր , տեսար , որում ջանացար .
 Դո՛ւ , Տէ՛ր , տուար , ում անուանեցար .
 Դո՛ւ , Տէ՛ր , հանգի՛ր , զի աշխատեցար :
 Ես աղաչեմ զիմ Տէ՛րդ բարի ,
 Չեռանունդ ծառայս քո գերի ,
 Որ զայս լալոյ բանըս գրեցի ,
 Գլաեմ որ մերձ կաս այժմ Յիսուսի ,
 Ծո՛ւնը կրկնեա վասն իմ ցանկալի .
 Տո՛ւր աղաչանս ինձ աղերսալի .
 Դառնալ ի հող , ինձ կեանք չպիտի ¹⁸ :

2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

— 39 B. Բանքս : — 45 B—F. Ոչ այն : — 46 A. Ոչ
 այն . B—F. արցունքն իջանի : — 47 A. պլովի : —
 48 B—F. չունիմ Անուս հառաչն այլ չերեւի : —
 51 B—F. Ու Աստուած : — 52 A. զեղ . B—F. զերթ :
 — 53 B—F. յամեն : — 54 A. Կիրթ ու . B—F. Կիրթ
 էր... ամեն : — 55 B. ունի Կենօքն սուրբ էր եւ ոչ քո
 պիտի . C—F. ամի կենօքն սուրբ էր եւ ոչ քո
 — 56 A. վարդիքն սուրբ : — 57 A. սղորմն : — 60 A.
 ի բար . B—F. զամեն : — 62 B—F. ոչ առ ծուլիցն :
 — 66 A. գրչի : — 67 B—F. ցորեկի : — 70 B. չառ-
 նէր նա տեղի . C—F. յունէր նա տեղի : — 71 B—F.
 զըւարթուն էր : — 72 B—F. ամենի : — 73 B. C. E.

աղբեր : — 74 B—F. ի յիւր : — 75 A—F. ամենի
 — 77 A. իսիտի . B—F. վստահ էր : — 81 B—F
 այրեացն էր : — 82 B. Սրբոցն... խօսելու . C—F. Հեռ
 տեղի խօսելու : — 83 A. բարոյ : — 84 F. Չունեւորաց
 տուն : — 86 A. Աւա՛ղ... խոպանեցաւ : — 88 A
 Աւա՛ղ : — 90 A. Աւա՛ղ . B. գերեաց : — 94 A. չունի
 Դո՛ւ , Տէ՛ր , տեսար , որում ջանացար : — 95 B. որում
 անուանեցար : — 96 B—F. հանգիտոս : — 98 A. Չե-
 րայ սնունդ : — 101 A. կրկնեա . B. կրկնեա : —
 102 A. աղերսալի :

¹⁸ Չեռազրիս վերջաւորութեան կցուած է յաւե-
 լուածս . «Ով սուրբ հայրդ Ներսէս զԱռաքել եպիս-
 կոսոս յիւեա՛ ստաջի Յիսուսի եւ բարեխաւսեա՛ վասն
 իմ» : Նոյնպէս Վենետիկինը ունի սա վերջաւորու-
 թիւնը : «Փառք Աստուծոյ յուսոյն մերոց եւ Տեառն
 Յիսուսի Գրիտոսոսի ոյժմ եւ միշտ եւ յաւիտեանս յառ-
 իտանից» (Բամզ . 1874, էջ 243) :

Herausgeber, Eigentümer und Verleger: Mechitharisten-Kongregation in Wien, VII, Mechitaristengasse 4
 Druck der Mechitharisten-Buchdruckerei — Für den Inhalt verantwortlich: P. Mesrop H a b o z i a n
 Alle Wien VII, Mechitaristengasse 4

